

Արձանագրություն №11/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. մարտի 12-ին տեղի ունեցած թիվ 11 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 64-ը (վաթսունչորսը):
Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. 2020-2021 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատում (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ.Գ. Գևորգյան):
2. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի հաստատում (զեկ.՝ պրոռեկտոր Է.Վ. Ասրիյան):
3. ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի հաստատում (զեկ.՝ պրոռեկտոր Է.Վ. Ասրիյան):
4. Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժինը, ինչպես նաև ԵՊՀ գիտական հանդեսների խմբագրությունները ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության կազմում ընդգրկելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի առաջարկություն ներկայացնելու մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):

Ընթացիկ հարցեր

5.1. ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հրաչիկ Բայրամյանի «Վրացերենի դասընթաց» աշխատանքը որպես դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.**- 2020-2021 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձավճարների չափերի հաստատման մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ ամիսներ առաջ խնդրի վերաբերյալ փուլ առ փուլ խորհրդակցություններ են անցկացվել ֆակուլտետների ղեկանների հետ, եկել համաձայնության ներկայացված վարձաչափերի հետ կապված: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ղեկան Հայկ Սարգսյանը նկատեց, որ քննարկումներում առաջարկ է եղել վարձաչափերի համար ավելի մեծ թիվ սահմանել, քան ներկայացված է փաստաթղթում՝ հնարավոր համարելով հետազայում ևս 20 տոկոսով վերանայել: Ի լրումն՝ Գեղամ Գևորգյանը նշեց, որ որոշ

մասնագիտությունների գծով այս տարի արդեն օրենքով թույլատրելի սահմանաչափին են մոտեցել, և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունումից հետո վարձավճարի սահմանաչափերի վերանայումների հնարավորություն կլինի:

Որոշեցին.- հաստատել 2020-2021 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձավճարների չափերը:

- 2. Լսեցին.**- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի հաստատման մասին: Պրոռեկտոր Էլինա Ասրիյանը ներկայացրեց, որ հետազոտական աշխատանքի ներդրման նպատակն է խթանել ուսանողների անհատական կամ խմբային հետազոտական կարողությունները և նպաստել մասնագիտական հմտությունների զարգացմանը: Հետազոտական բաղադրիչի ներդրման պիլոտային մեկնարկ էր տրվել 6 ֆակուլտետներում և 1 ինստիտուտում: Մեկ կիսամյակից հետո անցկացված մոնիթորինգի արդյունքում դուրս են բերվել այն խնդիրները, արվել վերլուծություններ ու հետևություններ, որոնք հիմք են դարձել ներկայացված կարգի բարելավման համար: Ըստ կարգի՝ նախատեսվում է 2-ից 6 մասնագիտական դասընթացներում ներդնել հետազոտական աշխատանք, որը փոխարինելու է կուրսային աշխատանքին, քանի որ վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք չեն նպաստում հետազոտական հմտությունների զարգացմանը: Մոնիթորինգի ընթացքում մատնանշված հիմնական թերությունը վերաբերում էր դասախոսի համար լրացուցիչ բեռնավածության առկայությանը: Խորհրդակցության արդյունքում եղել է այն եզրակացությունը, որ հետազոտական աշխատանքում ներգրավված յուրաքանչյուր ուսանողի համար դասախոսի անհատական բեռնավածության մեջ կսահմանվի 1 ժամ: Ռեկտորի Ժ/պ Գ.Գևորգյանը նկատեց, որ մեկ ուսանողի հաշվարկով ողջ կրթության ընթացքում կուրսայինների համար կար 10 ժամ, հիմա առաջարկվում է ամեն ուսանողի հաշվով ամեն մի հետազոտական բաղադրիչով առարկային ավելացնել 1 ժամ: Մագիստրատուրայում չկային պրակտիկայի ժամեր, հետազոտական բաղադրիչով առարկա հիմա ավելացվում է: Չհամաձայնելով պարզաբանման հետ՝ Խ. Ներկարարյանը նշեց, որ բեռնավածության ժամերի կորուստ է լինում՝ առաջարկելով ամբողջությամբ չվերացնել կուրսային աշխատանքները: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Արթուր Մահակյանը հետաքրքրվեց, թե ո՞ր են կորչելու կուրսային աշխատանքների համար տրվող 4 կրեդիտները: Էլինա Ասրիյանը նշեց, որ առաջարկվում է այդ 4 կրեդիտները ֆակուլտետների ընտրությամբ բաժանել հետազոտական բաղադրիչով առարկաների միջև: Աշխարհագրության և երկրաբանության, ռուս բանասիրության ֆակուլտետների դեկանների հարցին ի պատասխան՝ Է. Ասրիյանը նշեց, որ ուսանողը կարող է հրաժարվել հետազոտական աշխատանքի կատարումից, ստանալ 0 զրո միավոր հետազոտական բաղադրիչի համար, սակայն եզրափակիչ քննության ժամանակ հաղթահարել քննությունը և վաստակել դասընթացի համար ահրաժեշտ կրեդիտը: Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռաֆիկ Հակոբյանը նշեց, որ կուրսային աշխատանքները ուսանողներին թեմատիկ ընտրության ավելի լայն հնարավորություններ են տալիս, և այն ևս մեկ հնարավորություն է տալիս

համագործակցել այլ բուհերի գործընկերների հետ: Է. Ասրիյանը նկատեց, որ դասախոսն ուսանողի հետ միասին կարող է պայմանավորվել թեմաների վերաբերյալ, վերցնել կիրառական թեմաներ, որն է սահմանափակում չի լինելու թեմաների ընտրության հարցում և դա որոշվելու է ուսանողի հետ միասին: Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Արթուր Մկրտիչյանը որոշ առարկություններ հայտնեց կարգի վերաբերյալ: Ըստ նրա՝ գնահատման կարգը պետք է թողնել ֆակուլտետներին, ազատություն տալ այդ հարցում: Գեղամ Գևորգյանը նկատեց, որ պետք է հիմք ընդունել գնահատման ֆիքսված միավորը, իսկ դրա բաղադրիչները, չափորոշիչները սահմանել առարկաների առանձնահատկություններից ելնելով՝ ֆակուլտետների գիտական խորհուրդներում: Խմբային աշխատանքներում ներգրավված ուսանողների առավելագույն թվի վերաբերյալ Ա. Մկրտիչյանը առաջարկեց վերանայել և հանել այդ սահմանափակումը, ինչին ի պատասխան Գեղամ Գևորգյանը նշեց, որ ճիշտ կլինի ֆիքսված թվով հաստատել, հետագայում անհրաժեշտության դեպքում կարգում կատարել փոփոխություն:

Որոշեցին. - հաստատել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը:

3. Լսեցին. - ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի հաստատման մասին: Պրոռեկտոր Էլինա Ասրիյանը պարզաբանեց, որ սեպտեմբերին մագիստրոսական բոլոր ծրագրերի մշտադիտարկման արդյունքում բացահայտվեց, որ մագիստրատուրայում պրակտիկայի կազմակերպման հետ կապված առկա է մեծ խնդիր: Հաշվարկի նորմերում առաջարկվում է ավելացնել դրույթ, որը նախկինում չկար: Ըստ այդ դրույթի՝ նախատեսվում է մագիստրատուրայում յուրաքանչյուր ուսանողի համար պրակտիկայի կազմակերպումն իրականացնելու համար ավելացնել 4 ժամ: Ներկայացնելով առաջարկվող մյուս փոփոխությունը՝ Է. Ասրիյանն ասաց, որ այն վերաբերում է կուրսային աշխատանքը հետազոտական աշխատանքով փոխարինելուն: Բացի դրանից՝ նա նշեց, որ 2017թ. հաստատված փաստաթղթում ամրագրված էր հոսքի 60-հոգանոց խումբ, սակայն անհասկանալի է, թե որ դեպքում կարելի է այն կիսել: Առաջարկվում է, որ հոսքը բաղկացած լինի 60-75 հոգուց, ինչը կնշանակի, որ 75+1 ուսանողի դեպքում խումբը ենթակա է կիսվելու 2 հոսքի»: ԵՊՀ պրոռեկտորը նշեց, որ առաջարկվում է նաև ուսումնական խորհրդատուին (կուրատորին) տրվող դասաժամերն ավելացնել կրթական ծրագրի ղեկավարի դասաժամերին: Այսինքն՝ կրթական ծրագրի ժամերը պահպանելով՝ ավելացնել դրանց ևս 30 ժամ, որոնք հատկացվում էին ուսումնական խորհրդատվության համար: Ներկայացված նախագծի վերաբերյալ տեղի ունեցավ քննարկում, որը վերաբերում էր ասպիրանտների և հայցորդների ղեկավարման համար տրվող ժամերին: Ըստ ներկայացված նախագծի՝ տարվա ընթացքում 1 առկա ասպիրանտի համար նախատեսվում է 70 ժամ, հեռակա ասպիրանտի համար՝ 50 ժամ, իսկ 1 հայցորդի համար՝ 25 ժամ:

Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանն առաջարկեց հայցորդների ղեկավարման համար տրվող ժամերը ավելացնել, քանի որ ղեկավարման համար տարբերություն չկա ասպիրանտի ու հայցորդի հարցում: Իրավագիտության

Ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը ևս անհրաժեշտ համարեց հետագայում հայցորդի ձևակերպման կարգի և այդ ինստիտուտի վերանայումը: Տարբեր կարծիքներից հետո որոշվեց հարցը քվեարկության դնել երկու մասով՝ ասպիրանտների և հայցորդների դեկավարման համար տրվող ժամերի վերաբերյալ իրականացնելով առանձին քվեարկություն: Սակայն ընդհանուր մոտեցում այդ հարցում չձևավորվեց և հաստատվեցին ներկայացված նորմերում նշված ժամերը: Ռ. Մելքոնյանի հաջորդ դիտարկումը վերաբերում էր հումանիտար ծրագրերում մագիստրոսական խմբերի համար սահմանված 10 ուսանողի շեմին, նշելով, որ առաջարկել էր այդ շեմը իջեցնել, ինչը տեղ չի գտել ներկայացված նորմերում: Ըստ նրա՝ հումանիտար ոլորտում էլ կան որոշ մասնագիտացումներ, որոնց դեպքում ևս պետք էր ճկունություն ապահովել: Պրոռեկտոր Է. Ասրիյանը, կիսելով ներկայացված դիտարկման հարցում արված մտահոգությունը, նշեց, որ այդ շեմի սահմանումը կարող է ինչ-որ առումով խոչընդոտող հանգամանք լինել, սակայն ներկայացված շեմը երկար ժամանակ քննարկվել է մեթոդիստրիկում, ֆակուլտետներում և սահմանվել է այդ շեմը: Ի լրումն՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ այդ հաշվարկը կատարվել է առկա իրավիճակից ելնելով, քանի որ հումանիտար մասնագիտությունների գծով դիմողներն ավելի շատ են, քան բնագիտականում և բնագիտական խմբերում շեմի բարձրացումը լուրջ խնդիրներ կստեղծեր՝ ընդհուպ մինչև որոշ մասնագիտությունների փակումը: Ռ. Մելքոնյանը դիտարկում արեց նաև դոցենտի և պրոֆեսորի բեռնվածության մեջ ֆիքսված դասախոսության առնվազն 120 ժամի վերաբերյալ՝ նշելով, որ լեզվական ֆակուլտետներում պրոֆեսորը կամ դոցենտը լեզու է դասավանդում և դրանց մեծ մասը գործնական պարապմունքներ են, ստացվում է, որ դասավանդողը ստիպված է լինելու 1 դրույքով սահմանված 700 ժամից 120 ժամով ավել դասավանդել: Գ. Ղազինյանը ևս անդրադարձավ այդ խնդրին՝ նշելով, որ կրթության մատուցման, դասախոսության տրամաբանությունն այսօր փոխվում է, կարևորվում է գործնական հմտությունների, պրակտիկայի դերը և պրոֆեսորի կամ դոցենտի հաստիքում 120 ժամի դասախոսության պարտադիր պահանջն այսօր իրատեսական չէ: Նա առաջարկեց պարտադիր դասախոսության փոխարեն սահմանել պարտադիր լսարանային ժամեր ձևակերպումը՝ ելնելով վերոնշյալ տրամաբանությունից: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը, այդ առաջարկը համարելով ընդունելի, առաջարկեց հանել այն պահանջը, որ դոցենտը պետք է ունենա 120 ժամ դասախոսություն իր բեռնվածության մեջ և գիտիստրիկի հավանության դեպքում ձևակերպել նորմերում: Գ. Ղազինյանը առաջարկեց էլեկտրոնային ուսուցման «Moodle» համակարգը ժամանակի ընթացքում դարձնել ամբողջությամբ պարտադիր և հաշվարկել դասախոսի ծանրաբեռնվածության մեջ, և ոչ հավելավճարի ձևով: Ի պատասխան առաջարկին՝ Գ. Գևորգյանը նկատեց, որ ամիսներ առաջ առաջարկել է այդ համակարգով ուսուցումը դարձնել խրախուսանքի, հավելավճարի ձևով և հետագայում՝ 2 տարի անց, դարձնել պարտադիր:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Արթուր Մկրտիչյանն առարկություն հայտնեց նորմերի 16-րդ կետի այն ձևակերպման վրա, որտեղ նշված է, որ ուսումնական պրակտիկայի խումբը կազմված է՝ 30 ուսանողից (պրակտիկական դաշտային պայմաններում անցկացնելու դեպքում՝ 15 ուսանողից)՝ նշելով, որ նախկինում է

ընդունված «դաշտային պրակտիկա» ձևակերպումը փոխվել և սահմանվել է «պրակտիկա դաշտային պայմաններում» ձևակերպմամբ, ինչը որոշակի վիճարկումների տեղիք կարող է տալ: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն ընդունելի համարելով նկատառումը՝ առաջարկեց 2 ձևակերպումներն ամրագրել նորմերում:

Որոշեցին. - Հաստատել ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնասմեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը:

4.Լսեցին. - Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժինը, ինչպես նաև ԵՊՀ գիտական հանդեսների խմբագրությունները ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության կազմում ընդգրկելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին: Պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը զեկուցեց, որ ընդունված պրակտիկա է տարբեր բուհերում, և դրա հիմնավորումը համակարգման ու արդյունավետության բարձրացումն է:

Հարցի վերաբերյալ տեղի ունեցավ քննարկում, մասնավորապես հարցի այն բաղադրիչը, թե առաջարկվող փոփոխությունը համարվում է կառուցվածքային փոփոխություն և պետք է հաստատվի հոգաբարձուների խորհրդի կողմից, թե ոչ, և կարող է իրականացվել ռեկտորի հրամանի համաձայն: Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի տնօրեն Եզնիկ Միրզոյանը նկատեց, որ առաջարկվող փոփոխությունները կարող են կատարվել ռեկտորի հրամանով, քանի որ ենթակայություն է փոխվում և դա հոգաբարձուների խորհրդի իրավասության ներքո չէ, ինչին ի պատասխան ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ առաջարկը ենթադրում է կառուցվածքային փոփոխություն, ինչը գտնվում է հոգաբարձուների խորհրդի իրավասության ներքո: Արհեստակցական կազմակերպության նախագահ Արմեն Ավետիսյանը հարցրեց, թե արդյո՞ք իրավակազմակերպչական ձև է փոխվում և ենթադրվում է որևէ լուծարում, ինչին ի պատասխան՝ Գ. Գևորգյանը նշեց, որ որևէ լուծարում, գործունեության փոփոխություն չի նախատեսում: Քննարկվեց նաև առաջարկվող փոփոխության արդյունավետության վերաբերյալ այն դրույթը, որ ասպիրանտուրան կրթական երրորդ աստիճանն է և չի կարող ամբողջովին անմասն մնալ ուսումնական գործընթացից: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը և Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վահե Հովհաննիսյանը պարզաբանեցին, որ առաջարկվող փոփոխությունը կառուցվածքային փոփոխություն է և պետք է հաստատվի Հոգաբարձուների խորհրդի կողմից: Ռաֆայել Բարխուդարյանն էլ նշեց, որ փոփոխությունը չի ենթադրում, որ այն դուրս է մնալու ուսումնական գործընթացից:

Որոշեցին. - Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժինը և ԵՊՀ գիտական հանդեսների խմբագրությունները ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության ենթակայության տակ դնելու վերաբերյալ միջնորդել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

5.Լսեցին. - ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հրաչիկ Բայրամյանի «Վրացերենի դասընթաց» աշխատանքը որպես դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին: Գիտական քարտուղար Լևոն Հովսեփյանը

ներկայացրեց, որ որպես դասագիրք հաստատելու հարցը քննարկվել է ՀՀԻ և պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների նիստերում, առկա են համապատասխան որոշումները և մասնագիտական կարծիքներ: Պատմության ֆակուլտետի կովկասագիտություն ծրագրում դասավանդվում է վրացերեն լեզու և մինչև օրս չկա հաստատված դասագիրք:

Որոշեցին.- «Վրացերենի դասընթաց» աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Թ., դոցենտ Հրաչիկ Բայրամյան) որպես դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

20.03.2020թ.